ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 փետրվարի 2018թ. թիվ 31-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԾԱԳԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 189-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման 6-րդ կետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ.Տերտերյանի 14.11.2011թ. թիվ 03/15/7259-11 գրությունը և «ՀՀ Լոռու մարզի Արևածագի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական և ծնողական խորհուրդների 31.01.2018թ. համատեղ նիստի թիվ 5 արձանագրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևածագի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել Կարո Մելիքսեթյանի անունով:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2002թ. նոյեմբերի 13-ի թիվ 189-Ա որոշման թիվ 65 հավելվածով հաստատված կանոնադրության մեջ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևածագի միջնակարգ դպրոց» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևածագի Կարո Մելիքսեթյանի անվան միջնակարգ դպրոց» բառերով:

3. Հաստատել կանոնադրության փոփոխությունը:

4. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևածագի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Երիցյանին՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արևածագի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության փոփոխությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սահմանված կարգով պետական գրանցում իրականացնելու նպատակով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2018թ. փետրվարի 6
ք.Վանաձոր